12450

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 258 - 25

Նախաձեռնող՝ ***Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության Հայաստանի մասնաճյուղ***
ք. Երևան, Բաղրամյան փողոց 18

Գործունեությունը՝ ***«Շին Շողիկ» ճամբարի տարածքի բարեկարգում և մասնակի վերակառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

11.11

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 258 - 25

« 10 » 11 2025թ.

«Շին Շողիկ» ճամբարի տարածքի բարեկարգման և մասնակի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Առէն Պետրոս Տէյիրմէնճեան Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության Հայաստանի մասնաճյուղ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ, /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզի, Ծաղկաձոր համայնք, Արտավազ բնակավայր

Ներածական մաս. «Շին Շողիկ» ճամբարի տարածքի բարեկարգման և մասնակի վերակառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Փյունիկ բնակավայրի 1-ին փողոցի 1-ին փակուղի 1 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի գ) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Մոտ 5.8 հա տարածք զբաղեցնող ճամբարը կառուցված և ցանկապատված է: Հայցվող տարածքը համադրվում է «Արզական-Մեղրաձորի» արգելավայրի տարածքի հետ՝ 0,12 հա մակերեսով, այն հանդիսանում է լեռան թեք լանջ, որտեղ ըստ ներկայացված տեղեկատվության աշխատանքներ նախատեսված չէ: Ճամբարի տարածքի կեսը բարեկարգված է: Ճամբարի վերակառուցման և բարեկարգման 3-րդ փուլի նախագծով նախատեսված է բարեկարգել ճամբարի մնացած՝ 1.83 հա մասը, ինչպես նաև ավարտին հասցնել նախորդ փուլերից անավարտ մնացած աշխատանքները: Բարեկարգման աշխատանքները՝ հիմնականում հանդիսանում են արդեն կատարված աշխատանքների շարունակություն, ուստի դրանք պետք է կատարվեն արդեն արվածին համահունչ: Նախատեսված են հետևյալ աշխատանքները՝ քանդել առկա մեկ հարկանի չօգտագործվող և

խարխուլ օժանդակ կառույցները, քանդել առկա ասֆալտե ճանապարհներն ու հարթակները և դրանց փոխարեն իրականացնել քարից և մայթասալիկից սալահատակները, քանդել առկա պահակակետը և դրա փոխարեն իրականացնել մուտքային հանգույց՝ կից ավտոկայանատեղիներով, իսկ նկուղային հարկում՝ ոռոգման պոմպակայան: Քանդել առկա շվաքարանները և դրանց փոխարեն իրականացնել մետաղյա կարկասով սնկաձև տաղավարներ՝ 7 հատ, քանդել առկա ցանկապատը և դրա փոխարեն իրականացնել նոր պողպատյա ճաղապատ ցանկապատ 1.8 մ բարձրությամբ, քանդել առկա դահլիճային շենքի տանիքի ծածկույթն ու իրականացնել նորը, կտրել առկա չորացած, տապալման ենթակա և փտած հիմքով ծառատեսակները և տնկել 250 հատ նոր դեկորատիվ ծառեր, տեղափոխել և վերատնկել առկա փոքր ծառերը՝ 70 հատ, իրականացնել դեկորատիվ ճարտարապետական ֆորմաներ, կառուցել ֆուտբոլի մարզադաշտ՝ ցակապատված 3.5 մ բարձրությամբ թափանցիկ ցանկապատով, կառուցել թենիսի կորտ՝ ցանկապատված 5 մ բարձրությամբ թափանցիկ ցանկապատով, ճաշարանի ետնամասում կառուցել մեկ հարկանի պահեստային մասնաշենք և ավտոպարկ: Բնականոն աշխատանքն ապահովելու համար ճամբարի երկայնական ցանկապատերի երկայնքով նախատեսված են ճանապարհներ, որոնցից մեկը գրունտային է: Մնացյալ ամբողջ տարածքը նախատեսված է հետիոտնային շարժման համար: Մուտքային հանգույցից սկսում է գլխավոր ճեմուղին, որը ձգվում է մինչև ամֆիթատրոն: Այն նախատեսված է իրականացնել հիմնականում բնական քարերի տարբեր շարվածքներով արանքներում ունենալով սիզամարգային ընդհատումներ: Բարեկարգման աշխատանքներից զատ նախատեսված է կառուցել նաև ֆուտբոլի մարզահրապարակ, թենիսի կորտ, տաղավարներ և դեկորատիվ-գեղարվեստական կառուցվածքներ: Քանդման ենթակա են 592 քմ մակերեսով շինություններ՝ քանդվող քարե շինություններ՝ 208 քմ, փայտե շինություններ՝ 135 քմ, մետաղյա շվաքարաններ՝ 249 քմ: Քանդման ընթացքում առաջացած շինարարական նյութերի տեսքով թափոնները՝ քար, պատուհաններ, դռներ և այլն, կտեսակավորվեն և կտեղադրվեն առանձին-առանձին շինհրապարակում, որպեսզի հեշտ լինի դրանց գործածությունը: Մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝
- հողամասերի մակերեսը՝ 57207 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 4407 քմ,
- կանաչապատման մակերեսը՝ 34035 քմ,
- հետիոտնային սալիկապատ ուղիներ՝ 3427 քմ,
- ավտոմեքենայի բետոնյա ճանապարհ՝ 2310 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը նախատեսվում է իրականացել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի նախատեսվում է մակերեսային ճիմապատում, 3-րդ փուլի աշխատանքների ընթացքում նախատեսված է նաև 250 հատ նոր դեկորատիվ ծառերի տնկում՝ ձիակասկ, սոսի, թխկի, կատալպա, ալբիցիա, ուռենի, եղևնի, ելրեյթերիա հուրանավոր, ձիակասկ կարմիր ծաղիկներով, հուդայածառ, փշատ լաբուրնում, ակացիա գնդաձև, թխկի կարմիր, թխկի գնդաձև, բուդլեա: Տնկվող և տեղափոխվող ծառերի վերաբերյալ ձեռնարկողի և «Գարդենս» ՍՊԸ-ի կողմից ըստ

ներկայացված պայմանագրերի՝ «Գարդենս» ՍՊԸ-ն պարտավորված է տնկել և խնամել ծառերը՝ ապահովվելով դրանց կպչողականությունը և աճը մինչև դրանց անտառային շարք դասվելը: Կանաչապատ տարածքների, ծառերի ու սիզամարգերի ջրումը իրականացվում է խորքային հորի ջրով:

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ հայցվող տարածքում և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Ծրագրի տարածքում՝ Փյունիկ բնակավայրում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան՝ ըստ ՀՀ կառավարության 24 դեկտեմբերի 2003թվականի № 1793-Ն որոշման «Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկը հաստատելու մասին»:

Ոչ մի հուշարձան չի գտնվում ազդեցության գոտում և ոչ մի հուշարձան չի կարող վնասվել, հատկապես այն դեպքում, երբ ոչ մի պայթեցման կամ ուժեղ թրթռում առաջացնող մեխանիզմ չի կիրառվելու և ծրագրի ազդեցությունը խիստ ժամանակավոր բնույթ է կրելու:

Ճամբարի խմելու-կենցաղային ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա ջրային ռեսուրսների միջոցով՝ ըստ Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն Հայաստանի Մասնաճյուղին շրջակա միջավայրի նախարարության կողմից մեկ գործող խորքային հորի շահագործման համար տրամադրված N 0181-21 ջրօգտագործման թույլտվության: Ջրօգտագործման նպատակը խմելու-կենցաղային է: Խորքային հորի մոտ տեղադրված է ջրաչափ: Ձեռնարկողը կանոնավոր կերպով խորքային հորի ջրից նմուշները լաբորատոր փորձաքննության է ներկայացնում՝ ջրի որակը պարզելու համար: Ջրի պղտորության և ավազի հատիկների առկայության դեպքում ջուրը միայն տնտեսական նպատակներով է կիրառվում, իսկ խմելու և ճաշարանի համար ջուրը ձեռք է բերվում տեղական վաճառակետերից՝ տարբեր տարողունակության տարաներով: Միայն ջրի թափանցիկության վիզուալ զննումից հետո ջրի նմուշառման և կրկնակի լաբորատոր փորձաքննության դրական պատասխանից հետո է ջուրը կրկին կիրառվում խմելու նպատակով: Ճամբարի բոլոր քաղաքաշինական օբյեկտներից կոյուղաջրերի հեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպասարկվող կոյուղատար համակարգի միջոցով՝ Հանքավան-Հրազդան կոյուղու կոլեկտոր, որի համար առկա է կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի N 0181-21 թույլտվություն՝ տրամադրված 20.05.2021թ. շրջակա միջավայրի նախարարության կողմից: Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կոյուղու ներքին ցանցով հեռանալու են կոյուղու կուտակիչ հոր: Ներքին ցանցը մոնտաժվելու է կոյուղու պոլիվինիլքլորիդային PVC խողովակներից, որոնք իրար միանում են ռետինե սեղմիչ օղակներով:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում նախատեսվում է պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխվելու է դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հողկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Ծաղկաձորի համայնքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակմամբ: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Վերակառուցման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108 որոշման դրույթներով,
- Քանդման աշխատանքները իրականացնել թույլտվության առկայության դեպքում:
- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինարարության ընթացքում ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Առէն Պետրոս Տէյիրմէնճեան Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության Հայաստանի մասնաճյուղի փորձաքննության ներկայացված «Շին Շողիկ» ճամբարի տարածքի բարեկարգման և մասնակի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան